05/5585-18
1/17.7/4850-18

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

## Հ Ր Ա Մ Ա Ն

№ 409

«23» 04 2018 թ. ք.Երևան

### ՀՐՇԵՋ-ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ, ՀԱՏՈՒԿ ՀՐՇԵՋ, ՀԱՏՈՒԿ ՋՐԱՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՋՈԿԱՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՕՊԵՐԱՏԻՎ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ-ՀԱՆՁՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փրկարարական ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենքով հաստատված փրկարարական ծառայության կանոնագրքի 87-րդ հոդվածի 8-րդ մասով և ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 3-ի N 259-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կանոնադրության 16-րդ կետի 4-րդ ենթակետով՝

### Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Սահմանել հրշեջ-փրկարարական, հատուկ հրշեջ, հատուկ ջրափրկարարական ջոկատներում և հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնում օպերատիվ հերթապահության իրականացման ժամկետները և ընդունման-հանձնման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հրամանը հայտարարել ըստ առնչության:

Դ.ՏՈՆՈՅԱՆ

CoSign